ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 **թվականի հունիսի** 7-**ից** 9-**ը Ռուսաստանի Դաշնություն** (**Կազան**) **կրթության գործուղման արդյունքների մասին**

1. **ԱՆՈՒՆ**, **ԱԶԳԱՆՈՒՆ**
   Ժաննա Անդրեասյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**
   ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   2023 թվականի հունիսի 7-ից 9-ը Ռուսաստանի Դաշնություն (Կազան)

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Ռուսաստանի Դաշնության լուսավորության նախարարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն Կրթության նախարարների միջազգային ֆորումին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Կրթության նախարարների միջազգային ֆորումը կրում էր «Ձևավորելով ապագան» խորագիրը, որին մասնակցում էին 40 պետությունների կրթության նախարարներ, ոլորտի շուրջ 500 ներկայացուցիչներ:

Ֆորումին ներկայացվել են կրթության զարգացման թիրախային ուղղությունները, ինչպես նաև պետությունների միջև փոխհամագործակցության հեռանկարային հնարավորությունները: Անդրադարձ է կատարվել նաև կրթության գլոբալ ճգնաժամին, երբ կորոնավիրուսի համավարակի շրջանում ավելի քան մեկուկես միլիարդ սովորողների կրթությունը վտանգված էր: Մասնակիցները արձանագրեցին, որ համավարակը տեսանելի դարձրեց կրթական համակարգերում առկա խնդիրները՝ օրակարգային դարձնելով կրթության վերափոխման անհրաժեշտությունը:

Իմ կողմից բարձրաձայնվեց նաև այն հանգամանքը, որ անընդհատ փոփոխվող աշխարհում գիտելիքն ու ստեղծագործ մտածողությունը դարձել են սոցիալական համերաշխության, մարդկային կապիտալի զարգացման, կայուն տնտեսական և մշակութային առաջընթացի բանալին և որ այս գաղափարն է դրված է նաև ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի հիմքում: Ընդհանուր նկարագրով ներկայացվեց նաև ծրագիրը, որը նախատեսում է ապահովել Հայաստանի տնտեսության

և հասարակական կյանքի շարունակական, առաջանցիկ զարգացումը՝ փոխկապակցված գործունեության իրականացման միջոցով, որի նպատակն է մարդկային կապիտալի զարգացումը:

Ներկայացրել եմ նաև ՀՀ կրթության զարգացման ռազմավարության հիմնական ուղղություններն ու իրականացվող բարեփոխումները՝ շեշտելով, որ փաստաթուղթը մշակելիս հիմք են ընդունվել կրթության բովանդակության, միջավայրի և ենթակառուցվածքների բարելավման, կրթության շարունակականության ապահովման, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները:

Իմ կողմից ընդգծվել է կրթության և գիտության ոլորտներում միջազգային համագործակցության ընդլայնման ու հաջող փորձի կիրառման կարևորությունը, հիմնավորվել է, որ միջազգային համագործակցությունն ու համատեղ նախագծերի իրականացումը նպաստում են ոչ միայն կոնկրետ խնդիրների ու դրանց լուծման ուղիների բացահայտմանը, այլև միտված են կրթության որակի ապահովման նոր հեռանկարներ ու հնարավորություններ սահմանելուն:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Այցի ընթացքում հանդես եմ եկել ելույթով, որում մասնավորապես հրավիրել եմ մասնակիցների ուշադրությունն այն հանգամանքին, որ ամենաշահավետ ներդրումը ուսուցումն է և լուծելով մասնագիտական կադրերի պատրաստման կառավարման խնդիրը կարելի է բարձրացնել տնտեսական ձեռքբերումների մակարդակը, հաղթահարել աղքատությունն ու ճգնաժամը:

Հայտնել եմ նաև, որ Հայաստանի կրթության զարգացման ռազմավարական ծրագիրն ուղղված է մարդկային ներուժի ընդլայնմանը և մարդկային կապիտալի ինքնիրացման զարգացմանը, և տվյալ հայեցակարգը պահանջում է ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ամբողջական վերափոխում: Ներկայացվել է կրթության իրավունքի ապահովման խնդիրը և ուսուցումը կենսակերպ դարձնելու անհրաժեշտությունը, ինչը համապատասխանում է «Հայաստանի վերափոխման մինչև 2050 թվականի ռազմավարության» տեսլականին: Ֆորումի մասնակիցներին ներկայացվել է նաև Հայաստանի կրթական ծառայությունների և ապրանքների արտահանման հնարավորությունները, որի հիմքում է կրթության միջազգայնացումը:

Նախարարների միջազգային ֆորումի շրջանակում հանդիպել եմ ՌԴ գիտության և բարձրագույն կրթության նախարար Վալերի Ֆալկովի հետ: Հանդիպմանը մասնակցել է նաև ՌԴ գիտության և բարձրագույն կրթության նախարարի տեղակալ Կոնստանտին Մոգիլևսկին: Հանդիպման ընթացքում քննարկվել են բարձրագույն կրթության և

գիտության բնագավառներում փոխհամագործակցության և համատեղ նախագծեր իրականացնելու հնարավորությունները:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Երևանում Հայ-ռուսական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) գործունեությանը և համատեղ նախաձեռնությունների իրականացմանը, ինչպես նաև կարևորվել է Համալսարանի կայուն զարգացման ապահովմանն ուղղված համատեղ գործընթացների կազմակերպումը: Այցի շրջանակում Վ. Ֆալկովի հետ ստորագրվել է Համալսարանի ռեկտորի պաշտոնում նշանակելու համատեղ հրամանը: Ռեկտորի պաշտոնում նշանակվել է Համալսարանի ընդհանուր ժողովին ընտրված թեկնածուն՝ Էդուարդ Սանդոյանը:

Հանդիպել եմ նաև ՌԴ լուսավորության նախարար Սերգեյ Կրավցովի հետ, որի ընթացքում քննարկվել են երկկողմ փոխհամագործակցության հնարավորությունները: Կարևորվել են Երևանում 2023 թ. հունիսի 13-14-ը ֆորումի աշխատանքները, որի շրջանակում քննարկվելու են նաև կրթության և գիտության ոլորտներում հայ-ռուսական փոխհամագործակցության հեռանկարները:

Արձանագրվել է, որ համատեղ իրականացվող նախաձեռնությունները լավագույնս պետք է կիրառել՝ կրթության և գիտության բնագավառներում հայ-ռուսական համագործակցությունը որակապես ավելի բարձր մակարդակի դարձնելու համար:

Մասնակցել եմ նաև Ֆորումի շրջանակում կազմակերպված ՌԴ կրթության ցուցահանդեսին, ինչպես նաև այցելել կրթական և մշակութային հաստատություններ: Իննոպոլիսի համալսարան այցի ընթացքում ծանոթացել եմ տեխնոլոգիական ոլորտի համար մասնագետների պատրաստման կրթական և հետազոտական ծրագրերին:

Կազանի պետական համալսարանի այցի շրջանակում ներկայացվել են գրադարանում պահվող հայկական հին ձեռագրերը: Առաջարկվել է փոխհամագործակցել ՀՀ բուհերի և գիտական կազմակերպությունների հետ համատեղ կրթագիտական ծրագրեր իրականացնելու նպատակով: Ձեռք է բերվել պայմանավորվածություն մշակել հուշագիր, որտեղ կթիրախավորվեն փոխհամագործակցության համապատասխան ուղղությունները:

8.**ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

6/14/2023

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

14.03.2023 թ.

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ ԿԳՄՍՆ

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՎՈ 515-Ա

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Ժաննա Անդրեասյան՝ ՀՀ ԿԳՄՍ նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը Ռուսաստանի Դաշնություն (Կազան)

5. Գործուղման ժամկետները՝ 2023թ. հունիսի 7-ից 9-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ կեցության հետ կապված ծախսեր

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Ժաննա Անդրեասյան		Անուն, ազգանուն ...	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս,				
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	302411			302.411
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	0			0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0			0
	Օրերի քանակը	2			2
	Ընդամենը (դրամ)	*0*			*0*
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	41			41
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	15843			15.843
	Օրերի քանակը	3			3
	Ընդամենը (դրամ)	47530			47.530
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների				
	Մուտքի արտոնագրի վճար				
	Այլ ծախսեր (նկարագրել)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		*349.941*			*349.941*

Ծանոթություն: Նախնական վճարվել է 401721 << դրամ, ենթակա է վճարման 0 << դրամ:

ԿԳՄՍՆ գլխավոր քարտուղար՝ ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ